



**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ


Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2 , հեռ. 060621238, 2-38 , ss@ysmu.am

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 18 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՊԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊԲՀ) կանոնադրության 55-րդ կետը, ԵՊԲՀ գիտական խորհուրդը, լսելով ԵՊԲՀ հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Գ.Ավետիսյանի զեկուցումը, ռեկտորի խորհրդական Գ.Թամամյանի, քոլեջի տնօրենի պաշտոնակատար Ա.Հովհաննիսյանի և գիտական քարտուղար Տ.Գ.Ավագյանի հաղորդումները,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԵՊԲՀ հետբուհական և շարունակական կրթության 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքները գնահատել բավարար (զեկույցը կցվում է) (19-11-18-01):
 2. Հանձնարարել՝
 - 1) մասնագիտական և շարունակական կրթության կենտրոնի ղեկավար Սաթենիկ Բաղդասարյանին՝ վերանայել և բարելավել կլինիկական օրդինատորների համար ըստ մասնագիտությունների և մոդուլների մշակված «Կլինիկական օրդինատորի անձնագիրը» (19-11-18-02).
 - 2) Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ Լ.Ռ. Ավետիսյանին և հետբուհական և շարունակական կրթության գծով պրոռեկտոր՝ Գ.Ա.Ավետիսյանին՝ ա. Շարունակել կազմակերպել համանուն և/կամ միևնույն գործառություններ իրականացնող ամբիոնների միավորմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների գործընթացը (19-11-18-03).
- բ.համալսարանի 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում 2020թ. հոկտեմբերին կազմակերպել ուսումնամեթոդական գիտաժողով (19-11-18-04).



3) Կարիերայի կենտրոնի ղեկավար՝ Խ.Ս.Մարգարյանին՝
ա.միջոցներ ձեռնարկել «ԳԼՕԲ-ՈՒՍ» և «FMGE» ծրագրում՝ ավելի մեծ թվով
ուսանողներ ընդգրկելու համար (19-11-18-05).
բ.շարունակել «ԳԼՕԲ-ՈՒՍ» ծրագրի շրջանակում կիրառվող ձեռնարկների
հայալեզու մշակումները և տեսադասախոսությունների նկարահանումների
գործընթացը (19-11-18-06):

3. «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ-ում գործող ԵՊԲՀ սիմուլյացիոն
կենտրոնում ստեղծել վիրաբուժական մասնագիտությունների կրթական
ուսումնական բազա՝ շինարարական աշխատանքների համար 2020 թվականի
բյուջեի նախագծի ծախսային նախահաշվի համապատասխան հոդվածներում ըստ
գնահատված կարիքների հիման վրա կատարված հաշվարկների նախատեսելով
մինչև 200 000 000 ՀՀ դրամ, իսկ անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման
համար մինչև 300 000 000 ՀՀ դրամ (19-11-18-07):

4. Հավանություն տալ ԵՊԲՀ հիմնադրման 100-ամյակը նշելու միջոցառումների
տեսլականի և կազմակերպչական հարցերի նախագծին (կցվում է) և աջակցության
համար դիմել ՀՀ Կառավարությանը (19-11-18-08):

5. Հաստատել՝
- 1) «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամի քոլեջում ուսման վճարի փոխհատուցման մասին» կանոնակարգը
(կցվում է) (19-11-18-09),
 - 2) «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամի քոլեջում «Ուսումնառության արդյունքների, ստուգարքների,
քննությունների անցկացման ու հանձնման» կարգը (կցվում է) (19-11-18-10):

6. Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի
արձանագրությունը՝ ուրուլոգիայի և անդրուլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Սերգեյ
Վիկտորի Ֆանարջյանին պրոֆեսորի, բժշկական քիմիայի ամբիոնի ավագ
դասախոս Լիլիթ Սերոբի Հունանյանին և ախտաբանական անատոմիայի և
կլինիկական մորֆոլոգիայի ամբիոնի դասախոս Նաիրա Յուրիի Կարայանին
շնորհել դոցենտի գիտական կոչումներ՝ որոշումները սահմանված կարգով
ներկայացնելով ՀՀ ԲՈԿ-ի հաստատմանը (կցվում է) (19-10-17-11):

7. Որոշման կատարման հսկողությունը հանձնարարել ռեկտոր պրոֆեսոր
Ա.Ա.Մուրադյանին:

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Ա.Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բ.Գ.Դ. ՊՐՈՖ. Տ.Գ. ԱՎԱԳՅԱՆ